ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 7—8, 1960 Общественные науки

Ս. Տ. Ներսիսյան

«ԾԱՌԴԷԱՅԻՈՑ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ»

Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» նորից թերթելիս մեր ուշադրությունը գրավեց այն փաստը, որ պատմահայրը ինչ որ առնչություն է գտնում «Կադմոս» և «Սիսակ» էթնոնիմների միջև։ Մովսես Խորենացուն հասած անգիր զրույցները լավ պատկերացնում են, որ Հայկի թոռ և Արամանեակի որդի՝ Կադմոսի «տունը» գտնվել է «յերկիրն Արարադայ... ի լեռնոտին միում ի դաշտավայրի»[1]։ Այստեղից Հայկ նահապետը, համաձայն ավանդության, իր տոհմով գնում է հյուսիս, Վանա լճի արևմտյան՝ եղերքով դեպի Հարք, ապա Այրարատ։

Նույն տեղեկություններից դժվար չէ կռահել, որ Կադմոսի երկիրը սահմանակից է եղել Ասորեստանին։ Պատմահայրը հաղորդում է, որ Ասորեստանի նահապետ «Տիտանեանն Բէլ» իր զորքով «գայ հասանէ ի հիւսիսի, յերկիրն Արարադայ, մերձ ի տունն Կադմեայ»[2]։ Մի քիչ հետո պատմահայրը, հաղորդելով Արամի նվաճումների մասին, նշում է, որ նա հայոց երկրի արևելյան և հարավային սահմանները հանձնեց երկու ցեղերի ներկայացուցիչներին՝ «Սիսակեանցն զարևելս, եւ որք ի Կադմեայ տանէն զԱսորեստանինն»[3]։

Այս մեջբերումներից երևում է, որ Կադմոսի երկիրը գտնվում էր Ասորեստանին սահմանակից «Արարադ» երկրում։ Այս անունն էր կրում այժմյան Ջեբել-Ջուդի (2039 մետր բարձր.) լեռնագագաթը, որը ասորեստանյան արձանագրություններում հայտնի է Արարտու կամ Նիպուր անվան տակ։

Բիբլիական ավանդությունը ջրհեղեղի մասին սկզբնական շրջանում կապվելիս է եղել այս լեռան հետ։ Այժմ էլ տեղացի ասորի և արաբ ազգաբնակչությունը Ջեզիրե քաղաքի մոտերքը գտնվող Թեմանին գյուղի հիմնադիր համարում է Նոյ Նահապետին։ Այս փաստերը բանասերներին հիմք են տվել հայտնելու այն կարծիքը, որ «Արարադ երկիրը» նույն Ուրուատրի երկիրն է, որտեղ առաջին անգամ ասորեստանյան նվաճողները հանդիպեցին ուրարտական ցեղերի միությանը[4]։

Մեր հարցի համար հետաքրքիր է այն, որ ակադ. Գրիգոր Ղափանցյանը Խորենացու «Կադմոսի տունը» նույնացնում էր ասորեստանյան

---

[1] Մովսիսի Խորենացւոյ՝ Պատմութիւն Հայոց, Լ. Ժ, Տփղիս, 1913. էջ 33։
[2] Անդ, ԺԱ. էջ 34։
[3] Անդ, ԺԴ, էջ 46։
[4] Տես К. Патканов. Ванскне надписи и значение их для истории Передней Азии. СПб, 1881, стр. 71, 77, 89, 92—104.

արձանագրություններում բազմիցս հիշվող Կադմուխի || Կատմուխի երկրի հետ[5] Այն երկիրը տրվում էր «ի ուտեստ» Ասորեստանի թագավորի պալատի գլխավոր մատակարարին («ռաբշակե»)։

Ասորեստանյան այս հյուսիսային սահմանամերձ փոխարքայությունը — սատրապությունը տեղադրվում է հյուսիսային Միջագետքում՝ Տիգրիս գետի աջափնյա երկրամասում, տարածվելով մինչև Մասիուս—Թուր—Արդին լեռները, ներառյալ Մծբին քաղաքը։ Կատմուխի երկրի կենտրոնն է եղել Շերիշա քաղաքը, որը համապատասխանում է այժմյան Շարիշ գյուղին, Զեղիրև քաղաքից ոչ հեռու[6]։ Այս տեղադրությունը ցույց է տալիս, որ Կատմուխի երկիրը չի նույնացվում «Արարադ» երկրին, սակայն նրան հարևան էր, բաժանվելով նրանից միայն Տիգրիս գետով, այժմյան Զեղիրև քաղաքի շրջակայքում, այնտեղ, որտեղ այժմ իրար մոտենում են Թուրքիայի, Սիրիայի և Իրաքի պետական սահմանները։

Մեզ հետաքրքրող երկրորդ անունը «Սիսակ»-ը—իբրև տոհմանուն քաջ ծանոթ է պատմահոր և, ինչպես ինքն է ասում, սրա անունով է կոչվել սրան տրված երկիրը «Սիւնիք», որը պարսիկները «յստակագոյնս ևս Սիսական կոչեն»[7]։

Կարծես թե հարցը սրանով փակվում է՝ Հայաստանի ծայրագույն հարավում գտնվում էր «Կադմեայ տունը», իսկ արևելքում, ավելի ճիշտ՝ հյուսիս—արևելքում՝ գտնվում էր «Սիւնիք» կամ «Սիսական» աշխարհը։ Սակայն այս վկայություններին հետևում են նաև մի երկու վկայություն, որտեղից իմանում ենք, որ պատմահայրը, բացի Կադմոսի երկրից Հայաստանի հյուսիսում, գիտե նաև այլ երկրամաս «Կադմեան» տոհմի, որը գտնվում էր առընթեր «Սիսականաց» տոհմի երկրին, այսինքն Սյունիքին։ Ստորև բերում ենք այդ վկայությունները։

Մովսես Խորենացին պատմում է, որ պարթևների թագավոր Արշակը մակեդոնացիների հետ պատերազմելուց հետո, երբ գրավեց Բաբելոնը և Ասորեստանից արևելք և արևմուտք ընկած երկրները, նրա եղբայր Վաղարշակը, որը Հայաստանի թագավոր էր, մեծ զորք է գումարում «յԱստրպատականէ և ի Հայոց, որ ի միջոցի աշխարհիս, արս անուանին և քաջս, և զկոչեցեալն Բագարատ, և որք ընդ նովաւ քաջք, և ծովեղերեայսն մանկունս, որք ի Գեղամայ և Քանանացւոց, և Շարայի ծնունդք և Գուշարայ, և առ թեր Սիսակեանսն, և զԿադմեանսն և զնոցա մերձաւորսն, որպէս թէ զկէս մասն աշխարհիս։ Հասանէ ի միջոց աշխարհիս, վերագոյն քան զակունս Մօրին Մեծի, յափն Երասխայ, մոտ յԱրմաւիր որ ասի Բլուր»[8]։

Ինչպես տեսնում ենք, մեջբերված հատվածում թվարկվող նախարարական տոհմերը հիշատակվում են այլ անուններով՝ համաձայն նրանց առասպելական տոհմաբանության։ Եթե փորձենք տալ այս տոհմանուններին

---

[5] Պրոֆ. Դր. Ղափանցյան, Ուրարտուի պատմությունը (Հետազոտություն ըստ բեվեռագիր աղբյուրների), Երևանի պետ. համալսարանի գիտական աշխատություններ. հատոր XIV, Երևան, 1940, էջ 19։

[6] Nicolas Adontz. Histoire d'Arménie. Les origines du X-e siecle au VI-e (Av. J. C.), Paris, 1946, p. 49.

[7] Մովսիսի Խորենացւոյ՝ Պատմութիւն Հայոց, I, ԺԲ, Տփղիս, 1913, էջ 41։

[8] Անդ, II, Դ, էջ 106։

հոմանիշ նախարարական տների անունները նշված հաջորդականությամբ, կստանանք հետևյալ պատկերը.

1. «Ծովեզերեայսն մանկունքն, որք ի Գեղամայ» են — Գեղարքունի գավառի բնակիչներն են։

2. «Փանանացիք» այսինքն՝ Դնթունի նախարարական տոհմը, որը տիրում էր Նիգ գավառին։ Ապա հիշվում են՝

3. «Շարայի ծնունդք», այսինքն՝ Շիրակ գավառի բնակիչները, և

4. «Դուշարայ ծնունդք», այսինքն՝ Դուգարաց բդեշխությունը։

Սրանցից հետո «առ թեր» սրանց հիշատակվում են՝

5. «Սիսակեանք» և

6. «Կադմեանք և զնոցա մերձաւորսն»։

Այսպիսով ստանում ենք միմյանց առընթեր գտնվող գավառների ու երկրների շարք՝ Շիրակ, Դուգարք, Նիգ, «Ծովեզերեայք», Գեղաքունի, Սիսական կամ Սյունիք։ Այստեղ պարզ չէ միայն, թե որ երկիրն էր «Կադմեաններին» բնակավայրը, որը սակայն, պիտի գտնվեր «առ թեր» հիշատակված գավառներին ու երկրներին։ Հարցը կարծես պարզում է հետևյալ հատվածը։ Վաղարշակը հաստատում է «յարևելից կողմանէ, զեզերբ հայկական խօսիցս, կողմնակալս բիւրաւորս զերկուս ի ցեղից տանց նահապետութեանց, զՍիսակեանսդ և որ ի Կադմեայ տանէն, զորոց զանուանսն ի միում ի յառաջագունից ասացեալ ճառիցն կարգեցաք»։

Այս վկայությունից հետո Խորենացին աշխատում է ցույց տալ, որ Սյունիքի հետ միասին, նաև Աղվանքի այն մասը, որը մտնում որ Մեծ Հայքի կազմում, կառավարվում էր Սիսակի ցեղից սերված նախարարական տոհմերով։ «Յետ նորա մեծ և անուանի և բազմաբիւր զարևելից հիւսիսոյ կողմանն կարգէ կողմնակալութիւն՝ զայր անուանի և յամենայն գործ մտաւորութեան և հանճարոյ առաջին, զԱռան, առ մեծ գետովն, որ հատանէ դաշտն մեծ, որ անուանի Կուր։ Բայց զայս գիտեա, զի զցեղս զայս մեծ և անուանի մոռացումն եղև մեզ յառաջնումն մատենին յիշատակել, զգունդն իր ի Սիսակայ, որ ժառանգեաց զդաշտն Աղուանից և զլեռնակողմն նորին դաշտի, ի գետոյն Երասխայ մինչև ցամուրն որ ասի Հնարակերտ և աշխարհն յանուն քաղցրութեան բարուց նորա անուանեցաւ Աղուանք զի Աղու ձայնէին զնա։ Եւ ի սորա ծննդոց այս Առան անուանի և քաջ կարգեցաւ կողմնակալ բիւրաւոր ի Պարթևէն Վաղարշակայ։ Ի սորա զաւակաց ասեն սերեալ զազգն Ուտեացւոց և Գարդմանացւոց և Ծաւդէացւոց և Գարգարացւոց իշխանութիւնսն»[9]։ Ինչպես տեսնում ենք, Խորենացին այստեղ հանդես է գալիս իբրև Սյունյաց նախարարական տոհմի քաղաքական պրիորիտետի ջատագով։ Մեծ Հայքի կազմում գտնվող Աղվանքի կողմնակալություններին ժառանգաբար տիրող նախարարական «Ուտէացւոց և Գարդմանացւոց և Ծաւդէացւոց և Գարգարացւոց» անները, ըստ Խորենացու, առաջացել են այս Առանից, որը Սիսակի սերունդն է հադիսանում։ Ահա այստեղ է, որ Խորենացին իրեն դրսևորում է իբրև V դարի վերջին և VI դարի առաջին կեսին ապրող հեղինակ, երբ Սյունյաց նախարարական տոհմը հասավ գերիշխող դիրքի ոչ միայն մարզպանական Հայաստանում, այլև մարզպանական Աղվանքում ու Վրաց աշխարհում։

---

[9] Անդ, II, Ը, էջ 112—113։

[10] Անդ, էջ 113։

Այժմ վերադառնանք մեր բուն խնդրի պարզաբանման։ Մենք տեսանք, որ Վաղարշակը Մեծ Հայքի արևելյան ծայրամասում, այնտեղ, որտեղ վերջանում էր հայերեն լեզուն, նշանակում է երկու «բիւրաւոր կողմնակալ» «ի տեղից տանց նահապետութեանց» մեկը «զՍիսականսդ», մյուսը՝ «ի Կադմեայ տանէնն»։ Մենք տեսանք, որ, ըստ Մ. Խորենացու, Առանի սերունդից էին Ուտիքի, Գարդմանի, Ծավդևացվոց և Գարդարացվոց աշխարհների կողմնակալ—կառավարիչները, որոնց հարևանն էր Սյունիքը—Սիսականը։ Այժմ հարց է ծագում, ո՞ր նախարարությունն էր և ո՞րտեղ էր գտնվում այս կողմերում «Կադմեայ տան» անվան տակ, թագնված «կողմնակալությունը»։

Այս հարցին պատասխանելու համար մենք նորից պիտի անդրադառնանք Հայկական Միջագետքում գտնվող «Կադմոսի տան» || Կատմուխի-Կադմուխի երկրին։ Այս երկիրը հիշատակվում է III-րդ դարի վերջերի և IV ու V դարերի քաղաքական անցքերի կապակցությամբ և կոչվում է՝ Եղիշեի մոտ Ծաւդէք[11]։ Վերջինս համապատասխանում է հունարեն Ζαβδικηνή[12], լատիներեն Zabdicenae[13] և ասորերեն Bēth Zawdai ձևերով հայտնի երկրանվանը։ 410 թվականին Bēth Zawdai երկիրը ներկայացված է իբրև Մծբինի մետրոպոլիտական աթոռի թեմերից մեկը[14]։ Այս երկրի կենտրոնը պիտի գտնվեր Bezabde ամրոցում[15]—qastra d Beth Zaudai բնակավայրում, որը գտնվում էր Տիգրիս գետի աջ ափին, ճիշտ և ճիշտ այժմ հայտնի Ջեզիրե կամ Ջեզիրե Իբն-Օմար քաղաքի դիմաց[16]։ 591—610 թթ. միջև կազմած «Աշխարհացոյցը» ևս հիշում է Բզաբդէ վայրը[17]։ Այդպիսով պարզվում է, որ ասորեստանյան արձանագրությունների Կատմուխի երկիրը և Խորենացու «Կադմեայ տունը» վաղ միջնադարում կոչվել է Ծավդէք[18]։ Ուրեմն գոյություն է ունեցել երկու երկիր համանման անունով, որը Մովսես Խորենացուն ենթադրել է տվել, որ սրանք ծագում են միևնույն «նախահորից»։ Մովսես Խորենացուն հասած աղբյուրներից հայտնի է եղել, որ Ծաւդէք երկիրը մի ժամանակ կոչվել է այնպիսի անունով, որի հիմքում եղել է «Կադմ-» արմատը, որ Կադմուխի անվան ճիշտ ձևն է հանդիսանում։ Ուրեմն՝ հյուսիսային Ծաւդէքը ևս Մովսես Խորենացին համարում է «Կամդեայ տուն», որով պարզվում է, որ «Սիսական տան» կողքին հիշատակվող «Կադմեան տունը», նույն «Ծաւդէացւոց դիշխանութիւնն» է,

---

[11] Եղիշէի վասն Վարդանայ և հայոց պատերազմին. I, II, Երևան. 1957, էջ 10. 51։

[12] Տես՝ Н. Адонц. Фауст Византийский, как историк. „Христианский Восток", том VI, вып. III, Петроград, 1922, стр. 245.

[13] Ammianus Marcellinus, Hist., 25, 7, 9։ Տես՝ Հ. Հյուբշման, Հին հայոց տեղվո անունները թրգմ. Հ. Բ. Պիլեղիկյան («Ազգային մատենադարան» ԾԳ), Վիեննա, 1907, էջ 182—183։

[14] Անդ, էջ 32, ծանոթ. 2։

[15] Ammianus Marcellinus, Hist., 20, 7, 1.

[16] Տես՝ Հյուբշման, անդ, էջ 183։ Պտղոմեոսի մոտ Բեզարդեն հայտնի է Σαπφα անվան տակ։

[17] ... Լերինս երկու գկոհ ի Շնդար, և գմիւս լեառն երկայն՝ յորում Մարդէ բերդ, և Տուռապդին գաւառ և Բզարդէ», Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ յաւելուածովք նախնեաց հրատ. Ա. Սուքրեանի, Վենետիկ, 1881, էջ 37.

[18] Մարքվարտը իր Erānšāhr-ում (էջ 158, ծանոթ. 58) ենթադրում է, որ «Ծաւդէից» ձևը դրչագրի սխալ է և պիտի լիներ «Զաւդեից» ձևը, սակայն մեր հարցի համար այդ նշանակություն չունի և հազիվ թե այդ ենթադրությունը ճիշտ լինի։

որը հիշատակվում է Ուտիքի, Գարդմանի և Գարգարացիների իշխանությունների կողքին և իրրև Սյունիքին հարևան մի երկիր։

Սակայն ո՞րտեղ էր գտնվում այս իշխանությունը։ Բեռևս Ղևոնդ Ալիշանը հավանական էր համարում, որ Ծաւդեացիք նույն «Սոդք» ‖ «Սոթք», «Սոդացիս» նախարարական տոհմն է[19]։ Ստեփան Կանայանը ևս գտնում է, որ «Ծովդեացիք թերևս Խորենացու աշխարհագրության և Ս. Օրբելյանի հիշատակած Սյունյաց Սոտք—Սոդք գավառն է, որ գտնվում է Սևանա լճի արևելյան կողմը[20]։ Այս ենթադրությունը պետք է ճիշտ լինի։

Մեր հասած գրչագրերում «Ծաւդէացիք» անունը պատահում է հետևյալ ընթերցումներով. Ծաւդէացւոց, Ծօդացւոց, Ծաւդացւոց, Ծովդէացւոց, Ծօդէացւոց, Ծօդէից, Ծաւդէից։ Այստեղից կարելի է հետևցնել, որ Ծաւդէից—Ծաւդէացւոց ձևը առաջացել է Ծաւդք—Ծօդք ձևից։ Իսկ վերջինս հնչյունաբանական որոշ օրինաչափությունների հետևանքով կարող էր մի այլ բարբառային միջավայրում հնչվել «Սաւդք—Սօդք,Սոդք,Սոթք»։ Այսպես էր կոչվում Սյունաց նահանգի գավառներից մեկը, որի տերիտորիան ճշտիվ համընկնում է այժմյան Բասարդեչարի շրջանին։ Սոթք գավառի կենտրոնն էր համանուն գյուղաքաղաքը, որի հնագույն հիշատակությունը պատահում ենք Սեբեոսի մոտ՝ «Քաղաքագեղն կոչեցեալ Սաւդայ»։ Վերջինիս ուղղական ձևը պիտի լինի՝ «Սաւդք—Սօդք»։ Այսպես էր կոչվում համանուն գավառի կենտրոնը, որը այժմյան Զոդ գյուղն է։ Այսպիսով պարզվում է, որ Ծօդացւոց—Ծաւդէացւոց իշխանությունը նույն Սօդք—Սոդք—Սոթք գավառն է և, ինչպես կարելի է հետևցնել անուղղակի փաստերից, Ծաւդէդացի անունը առաջացել է ոչ թե գավառի անունից, այլ, ընդհակառակը, գավառը և նրան տիրող իշխանական տոհմի անունը առաջ է եկել նրա կենտրոնի Ծաւդք—Սաւդք գյուղաքաղաքի անունից։

Կցկտուր տեղեկություններից կարելի է եզրականացնել, որ Ծաւդէացւոց իշխանությունը գրավել է Սոդք գավառից շատ ավելի ընդարձակ տերիտորիա։ Այս իշխանության պետը հիշատակվում է Ագաթանգեղոսի մոտ այն իշխանների շարքում, որոնք, ըստ նրա, ուղեկցեցին Տրդատ III-ի (287—332) հրամանով Գրիգոր Լուսավորչին՝ նրա Կեսարիա գնալու ժամանակ։ Լուսավորչի շքախումբը, ըստ պատմագրի, բաղկացած էր 16 ամենահզոր իշխանական անների ներկայացուցիչներից, որոնք համարվում էին՝ «զգլխաւորս նախարարացն և զկուսակալս աշխարհացն»։ Սրանց թվումն էին՝

Մեծասաներորդ իշխան՝ իշխան Սիւնեաց աշխարհին.

Երկոտասաներորդ՝ իշխանն Ծաւդէից (Ծօդէից) աշխարհին.

Երեքտասաներորդ՝ իշխանն Ուտիացւոց աշխարհին»[22]։ Պատմաբանի ասելով՝ այս տասներկու նախարարական տների իշխաններն էին՝ «ընտիրք, կուսակալք, կողմնակալք, հազարաւորք, բիւրաւորք ի մէջ Հայաստան աշխարհի տանն Թորգոմայ»։

---

[19] Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893։

[20] Ստեփան Կանայանց, Անհայտ գավառներ հին Հայաստանի, Վաղարշապատ, 1914, էջ 13—14։

[21] Սեբէոս, Պատմութիւն,ԺԴ, Երևան, 1941, էջ 51։ Տարբեր ընթերցումն է «Սոդա»։

[22] Ագաթանգեղայ՝ Պատմութիւն Հայոց, 795, ՃԺԲ։ Տփղիս, 1909, էջ 414։ Նույնը տես նաև՝ Ուխտանէս՝ Պատմութիւն Հայոց, Ա, ԿԹ, Վաղարշապատ, 1871, էջ 99։

[23] Ագաթանգեղոս, անդ, էջ 415։

Հիրավի, ըստ մեզ հասած Զորանամակի Սյունյաց նախարարությունը պատկանում էր «բիւրաւորների» շարքին, նա դուրս էր բերում կովի դաշտ 19,400 այրուձի, իսկ Ծաւդէից և Ուտէացւոց նախարարությունները «հազարաւորների» շարքումն էին, նրանք դուրս էին բերում 1000 այրուձի[24]: Ինչպես տեսնում ենք, Ագաթանգեղոսը և Մովսես Խորենացին Ծաւդէացւոց իշխանությունը հիշատակում են Աղվանից երկրի իշխանությունների շարքում, որ համընկնում է Զորանամակում ընդունված հաջորդականության հետ.

Ագաթանգեղոս	Մ. Խորենացի	Զորանամակ[25]
1. Սիւնիք	1. Ուտիք	1. Կասպեցի
2. Ծաւդէք	2. Գարդման	2. Ուտէացի
3. Ուտիք	3. Ծաւդէք	3. Ծաւդէացի
	4. Դարգարացիք (Փայտակարան, Կասպք)	

Ցուցակների այս համադրումը ցույց է տալիս, որ անտարակուսելիորեն Ծաւդէացւոց նախարարությունը պատկանում էր Մեծ Հայքի կազմում մտնող Աղվանից երկրի կողմնակալությունների թվին, այսինքն՝ ինչպես բացատրում է Մովսես Խորենացին, «ի սորա (այսինքն՝ Առանի) զաւակաց ասեն սերեալ»[26]: Ահա այս հանգամանքն է, որ հիմք է տվել Ն. Ադոնցին հավասարության նշան դնելու Ծաւդէք—Զաւդէքի և Արցախի միջև[27]: Միևնույն ժամանակ մենք տեսանք, որ այս նախարարության կենտրոնը, ըստ «Աշխարհացույցի», Սյունիքի գավառներից մեկը հանդիսացող Սոդքն էր համանուն գյուղաքաղաքով: Այս փաստը տարակուսանքի մեջ է ձգում Ստեփան Կանայանին: Նա Ծաւդէացիքը նույնացնելով Սոդք գավառին, գտնում է, որ «ոչ միայն Եղիշէի երկու ցանկերում, այլև Ագաթանգեղոսի հիշած «Ծաւդէից» աշխարհը ևս Zabdicena-ն է», այսինքն Միջագետքի Կադմուխի երկիրը[28]: Այս պնդումը նա հիմնավորում է նրանով, որ փոքրիկ Սոդքը ներկայացնում էր 50 զինվոր, իսկ Ծաւդէացւոց երկիրը 3000[29]: Մեր մեջբերումները հերքում են այս կարծիքը և Ն. Ադոնցը ճիշտ է, երբ Ծաւդէացւոց իշխանությունը նույնացնում է Արցախի հետ: Մենք գտնում ենք, որ աջափնյա Աղվանքը, որը մինչև 387 թվականը պաշտոնապես համարվում էր Մեծ Հայքի թագավորության կազմում, բաժանված էր չորս ընդարձակ փոխարքայությունների—սատրապությունների՝ Գարդման, Ծաւդէացիք, Ուտիք և Գարգարացիք կամ Կասպից երկիր: Սրանցից առաջին երկուսը IV-րդ դարում արդեն հայացած էին, Ուտիքը ցեղային միություն սիտի լիներ, իսկ Գարգարացւոց կուսակալությունը, գոնե մինչև 338 թիվը, կազմում էր Փայտակարան քաղաքի քաղաքային տերիտորիան և կառավարվում էր այդ քաղաքում նստող արքունի վերակացուի կողմից: Ինչպես Սյունյաց նախարարության, Գարդմանի և

[24] Н. Адонц. Армения в эпоху Юстиниана, СПб, 1908, стр. 263.

[25] Անդ, էջ 251:

[26] Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, II, Ը, Տփղիս, 1913, էջ 113:

[27] Н. Адонц, հիշ. աշխ., էջ 291:

[28] Ստեփան Կանայանց, Անհայտ գավառներ Հին Հայաստանի, Վաղարշապատ 1914, էջ 16:

[29] Անդ, ծան. 1:

Ծաւդեքի իշխանությունների հիմնական ֆունկցիան էր պաշտպանել Մեծ Հայքի Միջնաշխարհը տանող Փոքր Կովկասի լեռներում գտնվող լեռնանցքները, որտեղից խուժում էին հյուսիսային բարբարոս ցեղերը։ Ինչպես երևվում է դեռևս Տիգրան Մեծի (95—56) ժամանակ գործադրվել էին լայն միջոցառումներ հայկական ստրկատիրական կենտրոնացված պետության թիկունքը ամրապնդելու այդ կողմերից։ Ըստ երևույթին, այդ հեռավոր ժամանակներն էին հիմնվել երկու վայրեր Տիգրանակերտ անունով. «Տիգրանակերտ աւան» (այժմ Թառնաուտ Աղդամի մոտ) և «միւս Տիգրանակերտ» (այժմ Գառնակեր կամ Բարսում Նամխորից հարավ)[30], առաջինը Գարդմանի սահմանում, երկրորդը՝ Ծաւդէք—Արցախի սահմանում։ Այս ինքնին հետաքրքիր հարցը կարոտ է հատուկ ուսումնասիրության, սակայն, այնուամենայնիվ, այս փաստը հիմք է տալիս կռահելու, որ Մեծ Հայքի ստրկատիրական պետության կոնսոլիդացման ժամանակաշրջանում պետք է տեղի ունենար Ծաւդէացւոց իշխանության կազմակերպումը, որի կառավարումը ժամանակի ընթացքում պիտի դառնար որոշ նախարարական տոհմի ժառանգական իրավունքը։

Հիշյալ ժամանակաշրջանի յուրաքանչյուր նախարարություն համարվում էր «կուսակալութիւն», «կողմնակալութիւն», որը հար և նման էր հելլենիստական Արևելքում հայտնի սատրապություններին։ Իշխանը կամ նախարարը նույն սատրապն էր և ձգտում էր իր պաշտոնը դարձնել իր տոհմի ժառանգական արտոնությունը—«պատիւ»։ Նման կողմնակալություն—սատրապիան հիմնականում ներկայացնում էր իրենից ռազմական մարզ, որտեղ ամեն ինչ ենթարկվում էր թագավորի ներկայացուցչին՝ սատրապին, որը համարվում էր փոխարքա։ Նրան էին ենթարկվում բոլոր ռազմա-ստրատեգիական ճանապարհները և ամրությունները, որտեղ զետեղված էր նրա «կայենական զօրքը»։

Այս խնդիրը արծարծելիս ակամայից հարց է առաջ գալիս՝ ինչու է Մովսես Խորենացին Ծաւդէացւոց իշխանության համար գործ ածում «Կադմեանք» պայմանական տերմինը։ Արդյո՞ք միայն նրա համար, որ այս հյուսիսային ծայրամասում գտնվող նախարարության անունը՝ Ծաւդէք համընկնում էր հարավային ծայրամասում՝ «Կադմեան»—Կադմուխի երկրում գոյություն ունեցող մի այլ Ծաւդէք անունը կրող նախարարության հետ։ Ա՞ռդյոք այս անունների պատահական զուգադիպությունն է հիմք հանդիսացել կարծելու, որ երկու տոհմերն էլ սերված են «կադմեական» տնից, թե իսկապես գոյություն է ունեցել ինչ որ կապ նրանց միջև։ Արևելյան դեսպոտիայի պայմաններում բոլորովին բացառված չէ այն հանդամանքը, որ իրոք պետական իշխանությունը կարող էր մի ամբողջ ցեղ փոխադրել և բնակեցնել նոր տեղ—ավյալ դեպքում Միջագետքից Փոքր Կովկասի լեռները—ապահովելու հյուսիս-արևելյան սահմանների անվտանգությունը։ Նման ենթադրությունը պարմանալի չպետք է թվա, եթե հիշենք, թե ինչպիսի մեծ ծավալ ուներ քաղաքային ազգաբնակչության վերագաղթեցումն ու վերաբնակեցումը Տիգրան II Մեծի և Արտավազդ II-ի օրոք։ Եթե մեր ենթադրությունը ճիշտ է, այդ դեպքում պատմահայրը չի սխալվում, երբ հյուսիսային Ծաւդէքը ևս համարում է սերած «Կադմեան տնից»։ Այս հավանական ենթադրությունը սակայն, մնում է ենթադրություն, քանի որ մեզ պակասում են այլ միջանկյալ

[30] Տես՝ Սեբէոս, Պատմութիւն, I,2, Երևան, 1941, էջ 93։

փաստեր, որոնք կարող էին ավելի զորեղ կռվան ծառայել նման եզրակացության համար։

Ինչևիցէ, անկախ այս բոլորից, կարելի է արձանագրել իբրև փաստ, որ մեզ անհայտ ժամանակաշրջանում, թերևս Տիգրան Մեծի օրոք, Սևանի ավազանում կազմվել է փոխարքայություն—սատրապություն, որին միացվել է Աղվանքից նվաճված Արցախը։ Այս փոխարքայության կենտրոնը գտնվել է Սևանա լճի հարավ-արևելյան ափին գտնվող այժմյան Ռասարգեչարի շրջանի Զոդ գյուղում, որը այն ժամանակ եղել է գյուղաքաղաք և կոչվել է «Ծաւդք-Սաւդք» («Ծոդք-Սոդք»)։ Այս անունից էլ առաջացել է «Ծաւդէացի» հորջորջումը։ Այս բնակավայրի անվան ձևը էթնիկական անուն է և կարող է ենթադրել տալ, որ, հիրավի, այստեղ բնակեցվել է Ծաւդէացի ցեղը կամ տոհմը։ Ինչ էլ եղած լիներ, մի բան պարզ է, որ այստեղ հիմնված փոխարքայությունը իր կենտրոնի անունով կոչվել է «Ծաւդէացւոց իշխանութիւն»։ Այս փոխարքայությունը, ըստ Դահնամակի և Ագաթանգեղոսի, պատկանում էր «հազարավորների» կարգին և ներկայանում էր արքունիքին՝ գլխավորելով երեք հազար այրուձի։

«Ծաւդէացւոց իշխանությունը» հիշատակվում է Ագաթանգեղոսի, Մովսես Խորենացու մոտ և Զորանամակում, այսինքն այն աղբյուրներում, որոնք խոսում են Մեծ Հայքի մասին նախ քան 387 թվականը։ Այնուհետև այս իշխանությունը չի հիշվում։ Նրա փոխարեն Զորանամակը հիշում է «Սոդացի» 50 այրուձիով[31] և խոսքը վերաբերում է միայն մարզպանության ժամանակաշրջանի Սևանի ավազանում պարփակված նախարարության։

387 թվից հետո, երբ բաժանվեց Մեծ Հայքի կենտրոնացված ստրկատիրական միապետությունը, իսկ 428 թվին ոչնչացվեց նաև Արշակունիների դինաստիայի թագավորությունը, վերանում են մի շարք նախարարություններ ու իշխանություններ, իսկ նրանց տերիտորիաները բաժանվում են հզոր և ազդեցիկ նախարարական տների միջև։ Մեզ հայտնի է, որ 387 թվից հետո Արցախ, Ուտիք և Փայտակարան նահանգները միացվեցին Աղվանքին, սակայն չնայած այս հանգամանքին, մեծ մասը այդ երկրների արդեն հայացել էր և ընդմիշտ կապվել էր բուն Հայաստանի հետ։ Նախկին Ծաւդէացւոց իշխանության տերիտորիան բաժանվել էր երկու մասի. Արցախը միացվել էր Աղվանքին. մնացել էր միայն Սևանի ավազանը Սոդք կենտրոնով, իբրև առանձին իշխանություն, սակայն վերջինս ևս, ինչպես երևում է, վերանում է։

Սասանյան արքունիքը մարզպանական Հայաստանում վարում էր հատուկ քաղաքականություն օրըստօրև հզորացող նախարարների հանդեպ։ Նա ձգտում էր քակտել միաբանությունը նրանց միջև և հակադրել նրանց միմյանց։ Այս քաղաքականության հետևանքն էր այն, որ Տիզբոնի արքունիքին հաջողվում է իր կողմը գրավել Սյունիքի տերերին։

Սյունյաց իշխանությունը մնում էր մարզպանական Հայաստանի կազմում և նրա ժառանգական պատիվն էր հսկել փոքր Կովկասի լեռնային անցքերից դեպի Այրարատը տանող ստրատեգիական ճանապարհները։ Դաղաքական նոր պայմաններում, երբ երկրի անկախությունը վերացել էր և այն ընկել էր վասալական կախման մեջ սասանյան արքունիքից, վերջինիս

[31] Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, стр. 251—252.

վրա հենվող Սյունյաց նախարարությունը դառնում է Սասանյանների գերիշխանության ամենաիրական հենարանը երկրում։ Այժմ արդեն Սյունյաց իշխանը, ունենալով նույն ժառանգական իրավունքները, արքայից արքայից ստանում է արտակարգ լիազորություններ։ Փայտակարանը դառնում է Սասանյան ռազմական ուժերի կենտրոն Անդրկովկասում։ Այս քաղաքից Արցախի և Սևանի ավազանի վրայով դեպի Այրարատ տանող ռազմա-ստրատեգիական ճանապարհը, որը Արշակունիների ժամանակ հսկում էր Ծաւդէացւոց իշխանը, այժմ հանձնվում էր Սյունյաց իշխանին, իբրև պարսից արքայից արքայի հավատարիմ ծառայի։ Ստեղծված պայմաններում այս պարտականությունները կոչված էին ոչ թե պաշտպանելու Հայաստանի սիրտը հանդիսացող Այրարատը օտար թշնամուց, այլ հակառակը--Սյունյաց իշխանի այդ ժառանգական իրավունքները ի սպաս են դրվում օտար տիրապետությունն ամրապնդման նպատակներին։

Արծարծվող հարցի լույսի տակ պարզվում է, թե ինչ էր իրենից ներկայացնում Սահակ Պարթև կաթողիկոսի և Վասակ Սյունու մարզպանության ժամանակաշրջանից (443—451) մեզ հասած Զորանամակում հիշվող «Սիւնեաց երկրորդն» նախարարությունը[32]։ Վերջինս պիտի լինի Զորանամակում հիշատակված «Սոդացի» նախարարությունը։ Անուղղակի տեղեկությունները ցույց են տալիս, որ նախկին Ծաւդէացւոց իշխանության հիմնական մասը՝ Սևանի ավազանը Սոդք կենտրոնով, հանձնվում է Վասակ Սյունուն իբրև ժառանգական կալվածք։ Վերջինս Սոդք գավառում, Նախկին Ծաւդք—Սաւդք գյուղաքաղաքի մոտ հիմնում է նոր կենտրոն, որը իր անունով կոչվում է Վասակաշէն[33]։ Ահա այստեղ հիմնված նոր նախարարությունն է, որ Գահնամակում կոչվում է «Սիւնեաց երկրորդն»։ Այս ժամանակվանից Սևանի ավազանը դառնում է Սյունյաց նահանգի անբաժան մասը և այդ տերիտորիայի ընդգրկումով էլ տալիս է մեզ «Աշխարհացույցը» այդ նահանգը։ Վասակ Սյունուն և նրա հաջորդներին է տրվում նաև Արցախը վարչական իշխանության իրավունքներով։ Ահա այս ժամանակվանից է, որ Արցախը կոչվում է նաև «Փոքր Սիւնիք» (կամ «Սիսական ի Կոտակ»)։ Հետագայում վերջինս ևս դառնում է Սյունյաց տոհմի ժառանգական սեփականություն և նույնիսկ այստեղ է փոխադրվում Սյունիքի քաղաքական կենտրոնը, ուստի Մյուս Հարանդ գավառը «Աշխարհացույց»-ում կոչվում է նաև «Սիսական ի ոստան»[34]։ Մենք այս հարցերի վրա կանգ չենք առնի և ավելի հանգամանորեն խոսելու ենք մի այլ ուսումնասիրության մեջ։ Այստեղ մենք հիշեցնում ենք միայն, թե որտեղ պետք է փնտրել Ովսեպ Խորենացու մոտ ցայտուն կերպով դրսևորվող հակամամիկոնյան—հակաարծրունյան և «Սիսակեան»—Բագրատունյան կողմնորոշման արմատները։ Հարցի այսպիսի լուսաբանումը մեզ հնարավորություն է տալիս գտնելու Վասակ Սյունու և նրա հաջորդների քաղաքական վարքագծի պատճառները։ Այս հարցերի մասին մենք խոսելու ենք այլուր։

---

[32] Տես՝ Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, стр. 249.

[33] Ստեփանոսի Օրբելյանի Պատմութիւն նահանգին Սիսական, ՀԴ, Թիֆլիզ, 1912, էջ514։

[34] Աշխարհացոյց Ի դարու [Армянская география VII века (приписывавшаяся Моисею Хоренскому), издал К. П. Патканов СПб, 1887, հայերեն բնագիր, էջ 19]։

Ի վերջո մի երկու խոսքով անդրադառնանք նորից «Կադմեայ տուն» տերմինին։

Եթե, իսկապես, Մովսես Խորենացին «Կադմեայ տուն» հասկացությանը տակ նկատի ուներ ասորեստանյան արձանագրությունների Կադմուխի—Կատմուխի երկիրը, ապա հարց է ծագում, որտեղից գիտեր պատմահայրը մի անուն, որը վաղուց արդեն վերացել էր պատմության ասպարեզից։ Դրված հարցին պատասխանելու համար հարկավոր է նկատի ունենալ հետևյալը՝ հին աշխարհում ասուրա-բաբելական գրականության մեջ և ավելի ուշ՝ հելլենիստական ժամանակաշրջանում ու միջնադարում, սովորական երևույթ էր պատմագրության և գեղարվեստական գրականության մեջ պայմանական աշխարհագրական տերմինների գործածությունը։ Սովորաբար, դրանք իրականում վաղուց մոռացված անուններ էին, որոնք, սակայն գործ էին ածվում հեղինակի կողմից, իր շարադրությանը ավելի ճորոմ և հոետորբանական երանգ տալու համար։ Այս արխայիկ անունները դառնում են «բարձր ոճին» հատուկ ճորոմ արտահայտություններ։

Միջնադարյան Հայաստանում գոյություն ուներ նման անունների մի ամբողջ ռեպերտուար, սովորաբար, վերցված հին կտակարանից, կամ հին հունական առասպելաբանությունից կամ հին հայկական վիպասանքից։ Օրինակ Հայաստան և հայ ժողովուրդ հասկացողությունը արտահայտում էին «Ազգ տանն Թորգոմայ» «Ասքանազեան գունդ» և այլ արխայիկ պսեվդո—բիբլիական տերմիններով։ Կամ հայ նախարարական տների առասպելական հիմնադիրներին Մովսես Խորեացին անվանում է պսեվդո—բիբլիական տերմիններով. «Շամբատ» (հորինված է «Սմբատ» անունից) իբրև Իադրատունիների նախահայր, կամ «Քանանիդաս»՝ իբրև Գնթունի նախարարական տոհմի նախահայրը և այլն։ Տեղական-հայկական, ասորեստանյան և այլ ժողովուրդների առասպելները և պատմական տրադիցիան Մովսես Խորենացու մոտ իբրև ուշ վերարտադրություն, առաջ են բերել «Արամազնեայք», «Դեղամեանք», «Եղիազարեանք», «Հայկազունք», «Յապետոսթեան», «Տարբան» «Քաւղեայք» են ձևերը։ Ահա այդ կարգի անուններին են պատկանում մեզ հետաքրքրող «Կադմեանք» և «Միսակեանք»։ Անշուշտ, «Կադմոս» անվան հունարեն «-ոս» վերջավորությունը հունաբանդ պրոցի բովով անցած Մովսես Խորենացու կողմից հորինված ասորեստանյան անվան հելլենականացված ձևն է։ Անշուշտ, այս անունը նրան հիշեցրել է հունական առասպելաբանության մեջ հայտնի «Կադմոսին» ճիշտ այնպես, ինչպես այժմ «Կարինէ»-ի փոխարեն ասում են «Կարինա», «Ռուզանի» փոխարեն՝ «Ռուզաննա», «Մեհրուժան»-ի փոխարեն՝ «Ժան» և այլն, և այլն։ Ես կանգ չեմ առնի տվյալ պատմական ժամանակաշրջանի համար բնորոշ այն սոցիալական միջավայրի վրա, որով պայմանավորված էր նման երևույթը։ Այդ ինքնըստինքյան պարզ և հասկանալի է։

С. Т. Еремян

„Цавдейское наместничество“

Резюме

В „Истории Армении“ Мовсеса Хоренаци Кадмос является этнонимом области „Дом Кадмоса“,которую Г. А. Капанцян справедливо отождествляет с „Кадмухи“ ассиро-вавилонских источников. В античных источниках эта область известна под именем Zabdicenae, в армянских-Цавдэк. Помимо „Дома Кадмоса“ существовал также „Удел Кадмосидов“ (Կադմիանք) по соседству с Сюнией. Последний отождествляется с ишханством Цавдейским (Мовсес Хоренаци· II, 8) на северо-востоке Армении—между областями Сюник, Утик, Гардман и областью Гаргареев (Каспианой),

Сходство названий Месопотамской области Кадмеаканк-Цавдек с интересующим нас "Уделом Кадмосидов"-Цавдэком указывает на наличие определенных исторических связей между ними. Быть может жители Кадмухи-Цавдэка были переселены на север, где была создана сатрапия со сходным названием. Центром нового наместничества стало местечко Цавдк или Савдк, которое породило этнонимическую форму Цавдеацик. После 387 г наместничество Цавдеацик было упразднено, в входящая в него область Арцах присоединена к Албании. Меньшая же часть перестает быть самостоятельным нахарарством и присоединяется к Сюнии. С середны V века Арцах зовется Малым Сюником (или Сисакан и—котак), а политическим центром его становится округ „Другой Абанд“ (Сисакан и—оскан).

S. T. Yeremian

„Tsavdey Vicegerency“

Summary

In the „History of Armenia“ by Movses Khorenatzi Cadmos is an ethnonym for the province „Home of Cadmos“, which G. A. Kapantzian truly identifies with „Kadmukhi“ in the Assyro-Babilonian sources. In the antique sources this province goes under the name Zabdicenae, in armenian ones — Tzavdeck. Besides the „Home of Cadmos“ there also existed the „Appanage of Cadmosides“ (Կադմիանք) in the vicinity of Syunia. The latter is identified with the „ishkhanate of Tzavdey“ (Movses Khorenatzi II, 8) on the north-east of Armenia — between the provinces Syunick, Utick, Gardman and that of the Gargareys (Caspiana).

The similarity of denominations of the Mesopotamian province Cadmeakanck-Tzavdeck with the rousing our interest for itself „Appanage of Cadmosides„ — Tzavdeck points out the presence of definite historical connections between them. May be the inhabitants of „Kadmukhi-Tzav-

deck" had been transmigrated to the north, where there was established a satrapy with a similar denomination. The borough Tzavdk or Savdk, which gave birth to the ethnonymic form of Tzavdeatzick became the centre of the new vicegerency. After 387. the vicegerency Tsavdeatzick has been abolished and the province Artzakh was joined with Albania. As to the lesser part it ceased to exist as a self-dependent nakharardom and is joined with Syunia. From the middle of the V century Artzakh is called the Little Syunick (or Sisakan i-kotack) and the region „Another Aband" (Sisakan i-oskan) becomes the political centre of it.